



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

017.4

η-23

ԿՐԹԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՂՈՒԹԻՒՆ

Ս. ԴԱԻԹԵԱՆԻ

ՀԻՄՆՈՒՍ. Ծ 1892 ԻՆ



ՆՈՐ

ՅԱՅ ՏԱԳԻՐ

1905



Զ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Աւելցած եւ նսխացած)



017.4
7-23

Կ. ՊՈՂԻՍ

Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Սուրբ Զաւարդ Գուստէի քիւ 14

5

8705 80 45

5 MAY 2009

017-4
7-23
mf

Հ Ո Ր

Յ ա յ տ ա ն գ ի ր

1905—1906



651
40

ԳԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Ա. Կը յօրինէ եւ կը հրատարակէ դասագիրքեր :

Բ. Կը հայթայթէ վարժարաններու համար պէտք եղած գիրքերն ու պիտոյրք :

Գ. Պոլսոյ եւ Գաւառներու դպրոցներուն համար դպրոցական պատճօնեաներ կ'ընտրէ եւ կը դրկէ :

Դ. Կը հրատարակէ նաեւ ուրիշ Հեղինակներու պատրաստած օգտակար գիրքեր :

Ե. Կը կատարէ ամէն տեսակ տպագրական եւ յարակից գործեր :



Ն Պ Ա Տ Ա Կ

Սասարեղ ազգային կրթութեան գործին.

Ս Կ Զ Բ ՈՒ Ն Ք

Ուրիշներու օգտին մէջ փնտնել իր շահը.

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԳԼԽՈՒՌՈՐ ՊԱՅՄԱՆ

Կանխիկ գործել .

ՅԱՅՏԱԳԻՐ-ԳՐԱՅՈՒՅԱԿ

Գ Ա Ի Թ Ե Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հիմնուած 1892 ին

Ա.

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք Ե Ր

Գաւթեան Գործակալութեան Հիմնադիր Տնօրէնը, 1880էն մինչեւ 1891, Պոլսոյ եւ Գաւառներու մէջ վարած ըլլալով Ուսուցչական եւ Տեսչական պատճօններ, եւ անձամբ զգացած ըլլալով կրթական արդի պահանջումներուն համաձայն դասագիրքեր յօրինելու պէտքը՝ մասնաւոր զբաղում ընտրած է աշխատիլ այս նպատակին համար, եւ 1887ին՝ առաջին անգամ ըլլալով՝ Տանկախօս Հայերու համար հրատարակած է Հայ Լեզուի Դասընթացքը որ կը բաղկանայ երեք մասերէ : Ապա՝ փորձառութեան վրայ հիմնուելով՝ շարունակած է իր ջանքերը նոյն ուղղութեամբ, եւ այսօր յիսուցէ աւելի դասական գիրքեր հրատարակած է, որոնք են,

1. ԱՌԱՋԻՆ ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՆԱՆՏ. Տասնըմէկերորդ Տպագր. 1904, էջ 112 : — Առաջին գիրք Տանկախօս տղոց. պարզ եւ դիւրին կերպով կ'աւանդէ բառեր. որոնցմով մանուկը կը վարժուի կազմել խօսքեր : Փոխադարձ Թարգմանութիւններով, բառերու վերայ այլ եւ այլ կրթութիւններով, մտամարզական եւ իրագործական հրահանգներով, մանկական ոտանաւորներով՝ առանց ձանձրանալու՝ մանուկը կ'ուսանի ընթերցանութիւն, Թարգմանութիւն, տարրական գիտելիք լեզուի : — Քանի մը ամտուան մէջ տղեկը կ'սկսի հայերէն խօսիլ : Այս է արդէն զբոյժին նպատակը : Զեռք բերուած ար-

դիւնը իրական եւ վաւերական է, Ուսուցիչներու վկայ-
ուածեամբ եւ վիճակագրութեամբ: **3 1/2 Դահ.**

2. ԵՐԿՐՈՐԿ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ. Տասներորդ Տպ. 1905, էջ 208: — Այս Բ. մասին մէջ է որ կը փայլին մեծօտին առաւելութիւնները: տղոց մտքին համապատասխան նիւթերով ընթերցանութեան կը վարժեցնէ, միանգամայն՝ իրագիտութեան, մասամբ կը ընթերցեն իրենց զիտելիքներու, բարոյական սկզբունքներու կ'ընտելացնէ. լեզուին հետ կը կրթէ նաեւ միտքն ու սիրտը: — Ամէն էջի ներքեւ կը գտնէք հրահանգներ որոնց մէջ է մեծօտին զազոտիքը, Հաստատ զիտեք որ, երբ այդ հրահանգները պիտի կոչուի խնամով կուսարեղ ջախ, Տաճկախօս մատուկը Հիմնադրութեամբ պիտի ըլլայ հայերէն կարգաւ, հասկնալ, խօսիլ եւ նոյն իսկ շարադրել:

5 Դահ.

3. ԵՐԿՐՈՐԿ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ Եօթներորդ Տպ. 1905, էջ 208: — Այս Գ. մասը, իբրեւ ընթերցանութեան զիրք, անբաղատելի առաւելութիւններ կ'ընծայէ: Եւ նախ, կարեւոր է գիտնալ թէ Երրորդ Վարժարիւնը ընդունուած եւ մեծապէս օգտակար եղած է որչափ Տաճկախօս՝ նոյնչափ ալ Հայաստան Գաւառներու եւ Պոլսոյ լուսազոյն դպրոցներուն մէջ: Կը պարունակէ բարոյագիտական, իրագիտական, մասամբ գիտական այլ պիտանի նիւթեր՝ ընթերցանութեան համար: Պարզ ընթերցարան մը չէ այս զիրքը, եւ աշակերտը զայն չիտի՝ կարողայ մերենական կերպով, հապա՝ հմտալից. նիւթերուն իմաստին պիտի թափանցէ, եւ գիտակցութեամբ պիտի առաջդիմէ՝ ստանալով միտքի եւ սիրտի մշակութիւն, իմացական կարողութեանց զարգացում եւ բազմակողմանի հրմտութիւն՝ գործնական եւ կարեւոր գիտելիքներու վրայ: Քերականութիւն, Մտամարդութիւն, իրագիտութիւն, Քաղաքացիական կրթութիւն, Եւայլն, Եւայլն: Պիտի կատարել մտաւոր, զբաւոր եւ բերանալի մարզանքներ՝ լեզուի

եւ մտածութեան, բուսականութեան, հոմանիշներու, հականիշներու, նմանաձայններու վրայ: Ինչպէս եւ վերլուծութիւնն իմաստի, ոճի, եւայլն: **5 Դահ.**

Ծանօթ. — Առանձին հրատարակուած է այս Գ. Մասին Ուղեցոյցը (Տես **40** Հրատարակութիւն):

4. ՏՆՐԱԿԱՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵԶՈՒԻ. Հինգերորդ Տպ. 1899, էջ 48. — Նախնական կարգերու դիւրին եւ գործնական եղանակով կ'աւանդէ հոյ լեզուին հիմնական օրէնքները եւ կը կանոնաւորէ աշակերտին լեզուն:

Լաւագոյն մեծօտով օժտուած այս զրբոյլը մեծագոյն քաջալերութեան եւ հմուտ մասնագէտներու գնահատման արժանացած եւ քիչ տանի մէջ զատուեակ հազարներով սպառած է:

2 Դահ.

Ծանօթ. — Այս զիրքին յաջորդ սպագրութեանց իրաւունքը նուիրուած է Ուսուցիչներու Օգնութեան Սընտուկին:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԱՍԵՆՐԹԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԲԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԵՐՐՈՐԴ ՏԱՊԱՐ. 1903, էջ 110. — Պէտք է կորոզլ այս զրբին յառաջարանը ուր մանրամասն բացատրուած է Քերականութեան արուեստին նըպատակը: Տանաւորապէս այս զիրքին առաւելութիւնները եւ դասաւորման եղանակը՝ որ շատ հրահանգիչ է: Ի՞նչ պէտք կայ՝ աշակերտին զոց սորվեցնել քերականական կանոններ: — հատուածներով ու գործնական կրթութիւններով կրնանք լեզուին օրէնքներն ու սկզբունքները ուսուցանել. այս է ահա Լրացուցիչին մէջ գործադրուած մեծօտը: Կը պարունակէ վերձանելի հատուածներ եւ անոնց անմիջապէս յաջորդող շահեկան հրահանգներու ճոյս մը: **3 Դահ.**

6. ՓՈՒՆՁ, ՀԱՆՈՒՔԱԾՈՅ ԱՇԽԱՐՀԱՐԱՐ ԼԵԶՈՒԻ. Հինգերորդ Տպ. 1903 էջ 94. — Զուտ ազգային առական, երգեր, մանրավէպեր, բարոյական եւ գիտական

հատուածներ, եւայլն: Ամէն նիւթի անմիջապէս կը յազոր-
ղէ բարոյական առած մը որ կ'ամբիօփէ նիւթին իմաստը:
Հոգ տարուած է որ հատուածները՝ Սէ իմաստի եւ Սէ լեզ-
ուի կողմէ յարմար ըլլան տղոց ըմբռնումին: **Յ Գաւ.**

7. ՓՆԶԱԿ, ՊՍՏԿԵՐԱԶԱՐԳ ԵՒ ԽՈՇՈՐԱԳԻՐ.
5⁰ Տպ. 1902, էջ 48: — Արձակ և ոտանաւոր փոքրիկ հաս-
ուածներու վրայ մանուկները կը վարժին ընթերցանու-
թեան եւ արասանուծեան. նիւթերն են շատ պարզ եւ
փոքրիկ տղոց ընտանի, լեզուէ՝ նոյնպէս

(հարիւրը 60 զրշ.) **1 1/4 Գաւ.**

Տ. ԵՐԿՐՈՐԻ ՓՈՒՆՋ, ՀՍԻԱՔԱԾՈՅ ԱՇԵԱՐ-
ՀԻԿ ԼԵԶՈՒԷ, ԱՐՉԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ, Չորրորդ Տպ.
1905, էջ 240: — Նախակրթարանի Միջին Դասարաննե-
րուն համար պատրաստուած այս դասագիրքը կը պարու-
նակէ ազգային գրիչներէ, ինչպէս եւ օտար հեղինակներէ
մեծ մասամբ անտիպ հատընտիր հատուածներ:

Նիւթերու խնամեալ ընտրութիւնը կը միտի մարզել
զպրոցական սերունդին միջքը՝ օգտաշատ ծանօթութեանց
մէջ, սիտքը՝ բարոյական սկզբունքներու եւ ազնիւ գգա-
ցումներու մէջ, մաշակը՝ զրական լեզուի մէջ:

Դիրիւ մասնաւոր առաւելութիւնները. Անձնիւր
հատուած ունի ստորեւ՝ բացատրելի բառեր, լեզուի, ի-
մաստի, ոճի, բերականութեան, համաձայնութեան, շարա-
դասութեան, բառակազմութեան, Հոմանիշ, Հականիշ, Նը-
մանաձայն բառերու վրայ, եւայլն: Ատնք Դասատուին
կատարելիք աշխատութեան նախագիծերն ու դասաւանդ-
ման ընդհանուր ուղղութիւնը ցոյց կուտան, եւ մեծապէս
պիտի նպաստեն աշակերտներուն մտաւոր զարգացման եւ
հայ լեզուի ճոխութեանց հմտանալուն **Տ Գաւ.**

9. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՅԻ ՇԱՐՄԱՐԻՍԻԹԵԱՆ ԵՒ ՎԱՅՆԶԱՐԱՆՈՒԹԵԱՆ. Երրորդ Տպ.
1900, էջ 80. — Ազգ. վարժարաններու մէջ շարագրու-
թեան եւ նամակագրութեան դասերը աստիճանաւոր ըն-

Սացրով աւանդելու կարեւորութիւնը անժխտելի է. հայե-
մէնի ուսուցիչները արդէն պէտք զգացած էին դասա-
զրքի մը որ դիւրին եւ հիմնապէս ուսուցանէ շարադրե-
լու նորուեստը: Փորձով հաստատուեցաւ թէ այդ պէտքը
լիուի կը գոհացնէ Գործն. Ընթացք Շարադրութեան եւ
Վայելչաբանութեան անուն գիրքը:

Բնական գերընտիր ոճ, աստիճանական քաշխուռ և
դասաւարտում, մարտը ու սանուն շեզու, շահեկան նիւ-
թեր, շարագրութեան հիմնական օրէնքներ, վայելչաբանա-
կան գիւտեր, հարցեր, կրթութիւններ, օրինակներ, նկա-
րագրութիւններ, նախադասութեանց կազմութեան հրա-
հանգներ, եւայլն: **Յ Գաւ.**

10. ԲԱՆՍԱԼԻ ՇԱՐՄԱՐԻՍԻԹԵԱՆ, Բ. Տպ. 1899
էջ 80: — Կը պարունակէ դասաւանդման և դանակը, հրա-
հանգներուն եւ շարադրելի նիւթերուն ռեդլայնումը, որմէ
կրնան օգտուիլ ուսուցիչներ եւ առանձին ուսանողներ:

7 Գաւ.
11. ԸՆՏԵՆԱՐԱՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԷ, ՊՍՏԿԵ-
ՐԱԶԱՐԻ ԵՒ ԽՈՇՈՐԱԳԻՐ, Առաջին գիրք այբուբենէն
եսիր. Հինգերորդ Տպ. 1905, էջ 64: — Բոլորովին նոր
մեծոտով մը փոքրիկ մանուկները կը վարժին ընթերցանու-
թեան. — առարկաներ եւ էականքներ, կենդանի եւ բոյս, գոր-
ծիք եւ պիտոյք՝ խումբ խումբ կը ներկայանան աշակերտին
որ այդ դասաւորութեամբ որոշ եւ ամբողջ զազափար կ'ունե-
նայ իրեն մօտ եւ ամենէն կարեւոր բուններուն վրայ, որոնց
Սիւր հետզհետէ կրնայ աւելնալ՝ բանի լայնայ իր միտքը:
Հարցումներու շնորհիւ, իր ծանօթութիւնները կ'ընդարձա-
կին՝ առարկաներու գործածութեան, յօրինման եւ այլ
հանգամանքներուն վրայ: **Չ Գաւ.**

12. ՍԿԶՈՒՆԻՔ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ, ԵՒ
ՇԱՐՄԱՐԻՍԻԹԵԱՆ. Երրորդ Տպագ. 1903, էջ 80:
— Գործնականէն տեսականը՝ այսինքն հատուածներէն կա-
նոնները հետեւցըներու մեծոտով՝ աշակերտը ընդհանուր

վերաբաղ մը կ'ընէ Գերականութեան, եւ հիմնապէս կ'ըմբռնէ բառերու պաշտօնն ու կիրառութեան եղանակը. մեծագոյն տատարն է բերականական շրջանէն զրազիտական շրջանը Թեւակոխելու, զարգացնելով՝ խօսելու, մտածելու եւ տըրամաբանելու կարողութիւնները: Գիրքին յօրինուածքը այնքան հրապուրիչ, այնքան դիւրին է որ Փատ. Ուսուցիչները բնաւ դժուարութիւն չպիտի ունենան մեծոտին Թափանցելու եւ մէկ ականարկով պիտի ըմբռնեն իրենց դասը հաճելի ընծայելու գաղտնիքը:

3 Գտհ.

13. NOUVELLE METHODE ALPHABET FRANÇAIS, Գործ ՏԻԿԻՆ ՍԱՌԻՆԻԿ ՏԷՐ ԲԱՐՌՈՂԻ (Տննադ Հաշէպլեան), Երեւոյ Տպ. 1905, էջ 64: — Մանկապարտէզներու եւ Տարրական Նախակրթարաններու մէջ Գոազիբրէնի ուսման յարմարագոյն դասագիրքն է՝ բոլորովին նոր (= Ուղղակի) մեծոտով յօրինուած: Մանկապարտէզ յաճախող փոքրիկները կրնան՝ առանց նոյն իսկ զաղը. այբուբենը ամբողջ սորված ըլլալու՝ առաջին օրէն նշանակիչ բառեր հեզել, կարդալ, Թարգմանել եւ խօսելու վարժիլ:

2 Գտհ.

14. ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ ԿՐՕՒԹԻՈՒՄ ՄՍՆ, Երեւոյ Տպ. 1900, էջ 96: — Հին եւ Նոր Գտակարաններու եւ Հայ առաքելական եկեղեցիի վարդապետութեան համաձայն յօրինուած: Գործ ՎԱՐԳՄԱՆ ՔԱԶ. ԱՍԼԱՆԵԱՆԻ: Կրօնական գիտելիքները դիւրըմբռնելի եւ պարզ ոճով կ'աւանդէ՝ առանց զբաղեցնելու մանրամասնութիւններով եւ տղոց միտքէն բարձր նկեմերով:

Այս երկն ալ իր ուղղութեան եւ պարզ լեզուին համար ցտած է արժանաւոր ընդունելութիւնը յօգուտ մանուկ աշակերտներու բարոյական - կրօնական դաստիարակութեան, որ մեծագոյն խնամքի կարօտ է:

2 Գտհ.

15. ՊԱՏՆԱԿՐԱԶՄԱՐԳ ԱՅՐԱՅՆՍԱՐԱՆ, Վեցերորդ Տպ, 1905, էջ 32. — Աշակերտը Գնակի կամ Նարժական Տառերու վրայ այբուբենը ճանչնալէ ետքը, այս

առաջին զբոյնի մէջ կը վարժի հեզելու՝ նշանակիչ բառեր եւ ապա դիւրին խօսքեր՝ առանց ձանձրանալու:

Հազը 20 փո. 100ր 20 Գտհ.

16. ՅԱՆԱԿՐԱՅՈՒԹՅԱՆ Գործակալութեան. Վեցերորդ Տպ. 1905, էջ 32: — Որ կը պարունակէ Սմբատ Գաւթեանի հիմնած Գործակալութեան վրայ շահեկան տեղեկութիւններ, գործելու պայմաններն ու եղանակը, եւ այլն:

2 Գտհ.

17. ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՒԱՔԱԾՈՅ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԷ, ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ, Բ. Տպ. 1901, էջ 144: — Նոր եւ ընտիր կտորներ, զուտ աշխարհաբար, որոնք մեծապէս կը նպաստեն նախնական կարգերու մէջ լեզուի մշակութեան,

4 Գտհ.

18. Emerson E. White, A. M. LL. D. ԳՊՐՈՑՍՍՎԱՐՈՒԹԻՒՆ, Ս. Մ. Գասապեան, Տպ. 1897 էջ 96: — Կը բացատրէ դաստիարակչին դերը եւ դպրոց մը վարելու կարեւոր միջոցները, պայմանները եւ վախճանները՝ դիւրըմբռնելի եւ սահուն ոճով մը: Ամէն Ուսուցչի համար պիտանի զիրք մ'է, կը դիւրացնէ դպրոց կառավարելու եւ տնօրինելու եղանակը, որ հետեւութենէ զատ կը պահանջէ փորձառութիւն եւ վարչական տաղանդ, Բանք բանի՝ ուսուցիչներ այս հանգամանքները լաւ ուսումնասիրած չըլլալով՝ Թէ իրենք տուժած են եւ Թէ իրենց Թափած ճեգն ասպարդիւն մնացած է ի վնաս մատող մանուկներուն: Դպրոցավարութիւնը կը թելադրէ դասատուին՝ Թէ ինչպէս վարժեցնելու է տղաքը ինքնավարութեան, կարգապահութեան եւ աշխատասիրութեան. միանգամայն իրեն՝ ուսուցչին ալ կը ներշնչէ ճարտարութիւն, սրտի ու կամքի ուժ, դրական ու բարոյական նկարագիր որմէ պիտի ազդուի տղաքը: Ուսուցիչներ, զնեցէր այս զիրքը ԼԹէ կ'ուզէք յաջողիլ ձեր ասպարէզին մէջ:

5 Գտհ.

19. ԱՌԱԾԱՊԱՏՈՒՄ, Հ. Պ. 50 հատ աւակական առածներու վրայ յօրինուած առակներ են, ընթեր-

ցումի շարժանի՝ իրենց ժողովրդականութեամբ: **5 Գահ.**

20. ՀԱՄԱՌՈՏ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ,
Բ. Տպ. 1902 էջ 64: Պատրաստեց Ա. Հարէլեան, ազգային
գպրոցներու Միջին Նրշաններու համար: Կրօնագիտութիւ-
նը պարզ եղանակով մը կ'ուսուցանէ՝ բացատրելով եկեղե-
ցիին աւագ տօները եւ 7 խորհուրդները կամ պաշտամուն-
քին, նուիրապետական կարգերը, քրիստոնէական ժողովներն
ու աղանդները եւ մասնաւորապէս Հայ. Ս. եւ Առաքելու-
կան եկեղեցիին ձէսերն ու կարգերը: **3 Գահ.**

21. ՄՐՏԻՍ ՉՍՅՆԸ, Քերթուածներ: **5 Գհ.**

22. ՆՈՒԷՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ,
ՍՄԲԱՏ ԳԱՌԹԱՆԻ Բ. Տպ. Պակեազարդ. 1904, էջ
48: — Զուտ աշխարհաբարով գրուած ռասնաւորներու ւս-
ուաչին գիրքն է՝ բաշայարմար Մանկապարտէզներու և
Նախակրթարաններու: **1 1/2 Գահ.**

23. ԱՂԶԻՆԵՐՈՒ ԳՍՏԻԱՐԱՆՈՒ-
ԹԻՒՆ. Ա. Տպ. 1898, էջ 72: Տըլամպէս Մարքիզոնիին
խրատները, Թարգմ. Յուսիկ Ծ. Վ. — Իգական սեռի պի-
րելագոյն գիրքն է, ամենուն մատչելի՝ նիւթով, լեզուով
եւ գիտով: **3 Գահ.**

24. ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԺՈՂՈՒ-
ՎՐԳՎԱԿՍՆ ԳՍՏԵՐ, Ա. Տպ. 1897, էջ 112: Անգղիա-
ցի նշանաւոր իմաստասէր-քննախոս Հրայիի գործը: —
Գիտական աշխարհին մէջ ծանօթ երկ մ'է որ մեծապէս
սատարած է գիտութիւնը ուսմկացնելու, ժողովրդին մատ-
չելի ընելու: Նոյն գիրքը՝ հետեւողութեամբ՝ հայացուցած է
Ուսուցիչ Պրն. Գ. Անդրէասեան: Իր այս աշխատասիրչու
թիւնը պարտատուած է ուղղակի ժողովուրդին յիտքը Եւ-
աստորելու՝ Գիտական հիմերու վրայ: Ամէն աստիճանի վրե-
տային կարողութիւն ունեցող մարդ կրնայ զիբուս ըմբռնել
գրքին մէջի շրուտ տրամաբանութիւնը: Յոսմախ կը գանձա-
տինք թէ գիտական ուսումներու բիչ տեղ ու կարեւորու-
թիւն կը տրուի մեր գպրոցներուն մէջ: ահա գրքոյի մը որ

տեղ չի թողուր այդ գանգաւներուն, եւ կ'արժէ որ դպրոցի
տղաք, ինչպէս ամէն կարգալ գիտցող մարդիկ, անհրաժեշտ
կենարով ունենան եւ ուսումնասիրեն այս գիրքը. եւ անոր
աւանդած գիտական ծանօթութիւնները աղէկ սորվին:

3 Գահ.

25. ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԳՍՏԻԱՐԱՆՈՒԹԻՒՆ,
Առաջին Տպագր. 1899, էջ 80. Երկրորդ խրատական
գիրքն է զոր Յուսիկ Ծ. Վ. կ'ընծայէ հայ մատաղ սերուն-
դին, որուն տրուած ուսումն ու լեզուական ու գիտական
հմտութիւնը թերի պիտի Յայնի, եթէ մասնաւոր հոգածու-
թեան առարկայ չընէինք սրտի եւ հոգիի մշակութիւնը:
Բարեկրթութեան, մարդավարութեան սկզբունքները չնե-
րընչէինք: Ա՛յս է ահա գրքոյիին նպատակը, որ շատ կարե-
ւոր հրահանգներ կը պարունակէ պատանի եւ երիտասարդ
հասակի համար:

Հայր մը կամ մայր մը ինչպէս կրթելու է իր զաւակը,
ինչ ուղղութիւն տալու է անոր զազաւարներուն, վարք ու
բարքին, նիստ ու կացին, ուրիշներու հետ կենցաղավա-
րութեան, եւ ընդհանրապէս տպրելու պայմաններուն. ա-
տոնք ամէնը պարզ ու հասկնալի ոճով մը բացատրուած են
այս փոքրիկ գիրքին մէջ: **3 Գահ.**

26. ԲՈՒՐԱԿՆ ԾԱՐԱԹՎԱԹԵՐԻԹ, Ծրագիր. —
Տոհմային Գրականութիւն. Բանասիրական, Լեզուա-
գիտական, Ազգագրական նիւթեր, Գպրոցական Մտտե-
նագրութիւն, մասնաւոր Ուսումնասիրութիւններ հայ
նշանաւոր գրագէտներու եւ գիտուններու վրայ: Ընկերայ-
ին եւ իմաստասիրական նիւթեր, տնտեսական նիւթեր,
մատենախօսութիւն՝ նոր եւ ամէն տեղ լոյս տեսած բոլոր
հայերէն գիրքերուն վրայ: Օտար մատենագրութեան վրայ
լրացուցիչ ծանօթութիւններ: Գաղափարային վէպեր՝ առ-
նուած մեր կեանքէն: Ազգային, Քաղաքական, Ուսումնա-
կան եւ Գիտական խիստ կարեւոր լուրեր: Այս ծրագրով
1898, 1899, եւ 1900ի Բիւրակներուն մէջ հրատարա-

կեցինք ազգազրական, ուսմակազրական եւ յեզուարանական նիւթեր եւ զաւառական բառեր, որոնք մեծ կարեւորութիւն ունին բնատոհմիկ գրականութեան համար եւ ուսումնասիրութեան առատնիւթ կը հայժայթեն անոնց որ կը մշակեն բուն ժողովրդական գրականութիւնն ու կը պրպտեն ազգազրական ճիւղին թարուեն զանձերը: Ամէն Հայ անհատի ընդհանուր զարգացման եւ գրական ծարաւին զոհացում կուտայ:

1898ի	Բիւրակներ կազմուած կ'արժէ	2	Լիւրս
1899ի	»	1	»
1900ի	»	1/2	»

27. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, Օսմանեան Կոյս. րութեան, Դ. Տաչկոնց, 1898, էջ 78. — Տարրական Նսւ. խակրթարանի Բարձրագոյն Դասընթացքին համապատասխանող այս դասագիրքը կը բովանդակէ Օսմ. Պետութեան զանազան մասերը՝ ընդլայնուած, ըստ նոր կրթական Ծրագրի: Ամէն մտրդ պէտք ունի ճանչնալու այն երկիրը ուր ծնած է ու կ'ապրի, եւ որքան լաւ ճանչնայ զայն, այնքան աւելի կ'օգտուի իր առօրեայ գործառնութիւններէն: Անհրաժեշտ է որ զպրօցներու մէջ մասնաւոր խնամով ուսուցանենք . սմ. աշխարհագրութիւնը: Ի՞նչ կ'արժէ տարիներով պարապիլ հեռուոր երկիրներու ուսումնասիրութեան, երբ մեր երկիրը՝ մեր միջավայրը լաւ չենք ճանչնար: Մենք՝ այս ընդարձակ ու գեղեցիկ երկրին ժողովուրդը, մենք՝ այս մեծ ու փառայեղ Պետութեան հաւատարիմ հպատակները, պէտք է որ մենք մեզ լաւ ճանչնանք, մեր չքնաղ երկրին քաղաքական, վարչական, տնտեսական, արհեստական եւ այլ կարգի հանգամանքներուն տեղեակ ու զիտակ ըլլանք: Ինքնամանաչուութիւնը այնքան օգտակար է, որքան մեր մօտն ու հեռուն գտնուող ազգերուն ու ժողովուրդներուն կեանքը հետազօտելի, անոնց երկիրն ու բազարակրթութիւնը, քաղաքական եւ վարչական դրութիւնները բնեւեւ եւ ուսանելի եւ Աշխարհագրութեան այս զա-

ազգիրքն ալ պատրաստել Թէլաղրեցիներ ճիշդ այս նպատակով որ մեր ուսանողները զպրօցական շրջանէն իսկ սորվին իրենք բնավայրին աշխարհագրութիւնը: **3 Գրահ.**

Օսմ. Աշխարհագրութեան այս առաջին ձեռնարկը կրնայ վրիպակներէ եւ անճշտութիւններէ զերծ չըլլալ, բնական է որ յաջորդ տպագրութեան առթիւ պիտի բարեփոխուի այդ ամէնը: Ուստի, ընդհանրապէս զաւառացի բոլոր ուսուցիչներուն խորհուրդ կուտանք ուժ տալ տեղագրական ուսման եւ իրենց գտնուած քաղաքը, զիւղը լաւ ուսումնասիրեն՝ բաղրատելով այս գրքին հետ, եւ մեզի դիկեն իրենց ուսումնասիրութիւնները՝ ըստ այնմ ճշդելու եւ ամբողջացնելու համար ինչ որ թերի է ասար մէջ: Այս ուսումնասիրութեան համար լաւագոյն առաջնորդ կրնայ ըլլալ Բիւրակնի 1899ի, 45 Թիւին մէջ հրատարակուած Տեղագրական Ուսումնասիրութեան Ծրագիրը:

28. ԳՆՐՈՒՍՊՆԵՐ, Յ. Ե. **5 Գրահ.**
29. ՏՂՈՅ ԿՐՕՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ, Հեղինակ Մկրտիչ Ծ. Վ. Աղաւեսէի. Տպ. 1900 էջ 176. **4 Գրահ.**

30. ԹՈՒՍՔ. ՍԵԳՐԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ, Տպ. 1900, էջ 40: — Վաճառականներու, զրագրներու: առուստերով զբաղող ամէն անհատի, ինչպէս եւ զպրօցականներու կ'ուսուցանէ Թուարանական խնդիրները զիւրին ու գործնական կերպով լուծել:

31. ԱՌԱՋՆՈՒԹԻ ԱՆԳԼԻՒԹՆԸ ԼԵՁՈՒԻ, Յ. Վարժապետեան (Մարտը), Տպ. 1900, էջ 96: — Անգլալեզուն զիւրին եղանակով՝ նոյն իսկ առանց դասատուի ուսուցանելու ամէնէն յարմար զիրքն է: Կը պարունակէ ընթերցման կանոններ, բերականական սկզբունքներ, հրահանգներ, խօսակցութեան վարժութիւններ, հատուածներ, եւ այլն: **5 Գրահ.**

32. ԻՎԱՆՃԷԼԻՒՆ, վէպ Լոնկֆէլլոյի, Թարգմ. Տ. Լ. (Իրրեւ Թերթօն հրատարակուած Բիւրակնի մէջ):

Տպ. 1903, էջ 80: — Բարոյականի մասին ամէնէն բժա-
խնդիրն անգամ՝ վատահոռեանք կրնայ կարդալ տալ իր աղ-
ջիկ թէ ման, զաւկին իբրեւ բարոյացուցիչ վէպ: **5 Դահ.**

33. ՕՍՄ. ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ (իլմի Ա.
տռզ), Գործ Ս. Յ. Կուրտիկեանի. (Տճակարան ուսուցիչի
եւ անդամ Ուսումնական Խորհրդոյ Ազգ. Կեդր, Վարչու-
թեան): Տպ. 1900, էջ 96: — Բանասէրներու, Օսմ. լե-
զուն սիրողներու եւ ուսանողներու համար անհրաժեշտ
գիրք մ'է՝ արտատպուած Բիւրաւին էն: **5 Դահ.**

34. ԿՈՐ ԳՊՐԱՅ, ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄ-
ԲՈՂՋ ԳՍԱՐՆԹԱՅՔ ՀԱՄԱԿԵԳՐՈՆ ԳՐՈՒԹԵԱՄԲ. Պատ-
կերազարդ գիրք Տարրական Նախակրթարանի ուսանողնե-
րու համար: Այս ձեռնարկին մէջ ուսման բոլոր առարկա-
ները մշակուած եւ դասերու բաժնուած ըլլալով՝ անոր շը՝
նորհիւ կարելի պիտի ըլլայ Ազգ. դպրոցներու մէջ միօրի-
նակ ժամանակացոյց ու Ծրագիր գործադրել: Սկզբունքն է
միակ դասարան, միակ դաստու եւ միակ դասագիրք: Ամ-
բողջ գործը կը բաղկանայ 10 Պրակներէ: Դպրոցական տա-
րին 10 ամիս հաշուելով՝ մէն մի ամսուան համար աշա-
կերաջ պիտի ունենայ միակ Պրակ մը որուն մէջ ամփոփ-
ուած են իր ուսանելիք բոլոր ճիւղերը. Բարոյագիտութիւն
Քաղաք. Կրթութիւն. Պատմութիւն, Աշխարհագրութիւն
Թուաբանութիւն, Գիտութիւններ եւ Մայրենի լեզու:

Մէկ օրինակի (կամ 10 Պրակի) գինն է փոսթայի
ծախքէն զատ

Արտասահմանի համար = 8 ֆրանք (3 ռուպլի),
Տասը օրինակ մէկէն գնողը 1 ձեռք, այն է 10 Պրակի
նուէր կ'ստանայ:

Պրակ առ Պրակ կը վաճառուի **5 Դահ.**

35. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ. ԾԱՆՈՒՑԱԳԻՐ .ՆՈՒ
ԳՊՐԱՅՅի, ուղղուած Կրթական մարմիններու, Տեսուչնե-
րու, Ուսուցիչներու եւ Դպրոցի բարեկամներու: Կը պարզէ
ՆՈՐ ԳՊՐԱՅՅի պայմանները, ուղղութիւնն ու ընթացքը՝ օգր

տակար թելադրութիւններ ընելով ուսուցիչներուն, որոնք
փափար ունին զարգացման եւ հետամուտ են ուսումնա-
սիրելու կրթական նոր սկզբունքներն ու համակերպրն զրու-
թիւնը: **5 Դահ.**

36. ԼԻՍԱԿԱՍԱՐ ԳՐԱՅՈՒՑԱԿ հոյերէն ամէն
տեսակ հրատարակութեանց՝ նիւթի եւ տեսակներու բա-
ժանուժով, Տպ. 1902, էջ 200:

37. ԾՍԱԿԱՔՍԱ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐ-
ԳՍՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ,
Հեղինակ Ա. Մանուկեան, նախկին ուսանող Էջմիածնի
Գէորգեան ձեմարանին և Ս. Բեժեթարապուրկի Համալսարա-
նին: Տարրական Նախակրթարանի մէջ կրօնական եւ բնա-
տոնմիկ պատմական ուսումը խառն կերպով աւանդող հա-
տոր մ'է, զոր զնահատած է Մանկունի Սրբազան եւ վաւե-
րացուցած է Կրօնական Ժողովը: Նիւթերը պարզ զաղափար-
ներու ձեւին տակ ու պարզագոյն կերպով բացատրուած
են: Եկեղեցական գիտելիքներէ զտա, նաեւ բարոյական
կամքը զօրացնող թելադրութիւններ կը պարունակէ, ինչ
որ կրօնի դասին բուն նպատակն է: Ա. Տպ. 1901, էջ 128:

1 Դահ.

38. ՀՍԱԿԱՍԱՐԱՆ ԲԱՐՈՑԱԳԻՏՈՒԹԵԱՆ
Ս. ԳԱՒԹԵԱՆԻ. — Շինիչ մանրավէպեր եւ բարոյագիտա-
կան դասեր. — Իրաւամբ արժանի է ամէն տան մէջ
գտնուելու. ամէն հասակի անհատներու համար կը պա-
րունակէ պատմուածքներ (recits) եւ մանրավէպեր (anec-
dotes), նպատակն է արժնցնել ազնուութեան, բարութեան
եւ առաքինութեան զգացումները՝ կազմել բարոյական նկա-
րագիր եւ սիրցնել կեանքը՝ բարձրացնելով անոր նշանա-
կութիւնը: Աղջիկներու և մանչերու սիրական ընկերը կրնայ
կոչուիլ այս գիրքը: Տպ. 1902, էջ 224:

6 Դահ.

39. ՄՐՏԻ ԽՍԱԿՆԻ ընդհանուր խորագրին տակ
կ'երեւան երկու սիրուն նորավէպեր, մէկը Չինական
կեանքէ (Հեղինակ՝ Ժիւտիթ Գօթիէ) միւսը Եւրոպական բար-

քէ դրուագ մը (Հեղինակ՝ Ժ. Հ. Ռօնի) : Սուցի Հովանաշէ որ Չինաստանցի կնոջ հոգեբանութիւնը կը ցուցնէ մեր ամէնէն գեղազէտ Գրիչներէն մէկուն՝ Թ. Թէրզեանի՝ Թարգմանուածիւն է, իսկ Ձիւնիբը, որ ցոյս ամուսնի մը հանձարեղ հնարքը կը պատմէ, մեր նորագոյն ու սիրուած Գրիչներէն « Տօմիկոյի (Ռոտուլֆ Սամիկեան) Թարգմանութիւնն է, 1902, էջ 32 :

5 Գտի :

40. ՌՈՒՆՅՑՈՅՑ, Երրորդ Վարժութեան հրահանգներուն լուծումը, դասատուներու եւ ինքնագործացման փափաքողներու անհրաժեշտ գիրք : Ամէն ուսուցիչ Թող ունենայ անկէջ :

Երրորդ Վարժութիւն մանկացը, այնքան սիրուած, այնքան տարածուած գիրք մը, այս ուղեցոյցին շնորհիւ աւելի եւս կը գնահատուի ուսուցիչներէն, որոնք պատրաստ կը գտնեն հրահանգներուն պատասխանները, եւ ժամանակի կորուստ չեն ունենար՝ հետաքրքրական հարցումներուն պրիւնները պրպտելու : 1903, էջ 88 :

5 Գտի :

41. ՀՍՄՍՆՈՑ ԵՐԱԳԻՑՈՒԹԻՒՆ ՊՍԿԿԵՐԱՐԻ. Գիտական ծանօթութիւնները այնքան պարզ ու ընտանի ոճով բացատրուած չէին մեր մէջ, որքան այս դասընթացքին մէջ որ Տարական Ա. Տարիին կը համապատասխանէ, նիւթերը՝ հոս բնական՝ խորհրդածուած շարքով մը կ'աւանդուին՝ ծանօթէն անձանթ հորիզոններ անցնելով, Պատկերներու օժանդակութեամբ եւ (այսպիսի գիտական ձեւնարկի մը համար) առաջին անգամ ըլլալով գործադրուած նոր ոճով մը՝ ճեպական հարցումներէ զատ գործնական հրահանգներ ալ դրուած են, իբրեւ անդրադարձում՝ արդէն ստացուած ուսումնական պաշարին : 1903, էջ 94 :

3 Գտի :

42. NOUVELLE MÉTHODE, Deuxieme livre, par Madame Satinig Der - Partogh, à l'usage des Ecoles du Levant. Առաջին անգամ է հոյ իգական սեռը այնքան ընդարձակ ոգիով մը «գտակար կ'ըլլայ՝ յօրինելով

գիրք մը որ պիտի տարածուի ամէն ազգի դպրոցներու մէջ. եւ իրօք Տանկաստանի բոլոր դպրոցականներուն ֆրանսերէն ուսուցանելու ամենայարմար գիրքն է : Ազնիւ Հեղինակուհին յաջողած է գործադրել Ուղղակի Մէթոտը (Methode Directe) զոր կիրարկելու եղանակն ալ ցոյց տուած է Conseils aux Professeurs խորագիրը կրող վերջաբանով մը որ նոյն իսկ Գուէնեան մէթոտէն կը բղխի : 1903, էջ 96 :

4 Գտի :

43. ՌԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՍ. ԵՐԿԱՍԻՐԵՑ Տ. Կրօնիդէս Քահ. Բ. Նալպանտեան : Ամէնքնիս ալ ժամ կ'երթանք, Պատարագի խորհուրդին կ'արժանանանք, հոգեյոյզ մրմունջներուն ունկնդիր կ'ըլլանք, արարողութեանց շքեղութեան ու խորհրդաւորութեան վրայ կը հիանանք... բայց երբ անոնց իմաստն ու բացատրութիւնը տալ հարկ ըլլայ, սր եւ է ծանօթութիւն չունինք՝ մեր կոմ ուրիշներուն հետաքրքրութիւնը գոհացնելու համար : Ահա այդ բացատրութիւններն է զորս կուտայ այս շահեկան գիրքը որուն սկիզբը գրուած է նմակ մը՝ ուրիշ ճիւղի մը՝ Գիտութեան Վարդապետ Մ. Թ. Նալպանտեանէ : 1903 էջ 72 :

2 1/2 Գտի :

44. ՄԱՅՐՆԻ ԼԵՂՈՒ ԳԱՆՈՒՆՆԵՐ, Ա. ՏԱՐԻ : Ընթերցարաններն ալ իրենց կեանքն ու մտքը ունին, եւ եթէ անոնց մէկ բանիին լոկ անունը անմուտց թնայ՝ շատ իսկ է իրենց համար եւ իբրեւ իրենց օգտակարութեան շրջանը բոլորած երկեր, տեղի կուտան աւելի նորերու եւ շահեկաններու : Այսպէս եղած է Մայրենի Լեզու անունին տակ երեցած ընթերցարաններուն համար, որոնց ցանկը տալ կ'արժէ՝ 1. Տէր Դեւոնդեանցի Ռուսահոյ լեզուով Մայրենի Լեզուն, 2. Աղայեանցի Մայրենի Լեզուները, 3. Միացեալ Ընկերութեան Մայրենի Լեզուները, 4. Այս վերջինի կեղծք, 5. Հմայեակ բան. էքսերճեանի, 6. Ընթերցարան Մայրենի Լեզուի Փա-

լագաշեանինը եւ 7. Ներկայ 440 հրատարակութիւնը որով մէջ անունէն գտտ ամէն բան նոր ու տարբեր է նախորդինը : Այս եօթներորդը (Դարեան Մայրենի Լեզուն) կը կրէ մեր դասագիրքերու բնորոշ դրոշմը, իբր նոր, հետաքրքրական եւ ներշնչող դասագիրք : հասկնի մէրոս, շնչիր՝ հիւրեր, կանոնաւոր շնչու, սիրուն պատկերներ, տրուել կազմ, աման գիւն՝ ահա ուրիշ առաւելութիւններ ալ որով պէտք չէ զանց առնուի, այնպէս չէ... 1903 էջ 94
2 1/2 Դտհ.

15. ԳԵՂԱՆԻՆ ՅԻՍՆՍԻՆ, իրավէպ, գրեց Օր. Մէրի Աղաւաւան Քսան տարեկան զարուն կեանքէրով վէպն է սա, զոր իզմիրցի դեռատի օրիորդը սահուն ոճով ու ռոմանտիկ դպրոցին հետեւեղումեամբ պատկերացուցած է : Նիւթը իրական է, եւ ո՛չ մտացածին, այնպէս որ քայլ առ քայլ կարելի է հետեւիլ վէպին հերոսներուն՝ անոնց ապրած միջավայրերն ու շրջանակները Յոնիական գեղաձիւժաղ ասիերն ըլլալով : Տպ. 1903, էջ 110, **5 Դտհ.**

16. ԾՐԱԳԻՐ ԱԶԳ. ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ. Ազգ. Պատրիարքարանը 1894 ին հրատարակեց օրէնքները որոնց համեմատ պէտք է վարուի մեր Տարական Նախակրթարանները, Պատրիարքարանի այդ հրատարակութիւնները, որոնք տետրակի ձեւով էին աւելի նպատակայարմար սեպեցիներ տախտակի ձեւով պատկերացնել, ուր մէկ ակնարկով կարելի է աչքի առջեւ ունենալ աղիւսակը մէն մի դասընթացքի եւ աւանդելի առարկայի, որ նիւթ կը կազմէ դաստիարակութեան : Ուրիշ առաւելութիւն մ'ալ կայ այս Պատկերին մէջ. ամէն մէկ ճիւղի համար գործածուելիք դասագիրքերը կը մատնանիշէ, ըստ վաւերացման Մէտրիքի. եւ ըստ յանձնարարութեան Պատրիարքարանի :

Այդ դասագիրքերը առաւելագոյն եւ մասնաւորապէս Ս. Դաւթեանի հրատարակութիւններն են, բնականաբար,

քանի որ անոնք կը խտացնեն ժամանակակից մանկավարժութեան բոլոր առաւելութիւնները :

Այս Ծրագիրը ձրի կը զրկուի, որպէս զի շրջանակի մէջ առնելով՝ վարժարաններու մէջ ի տես եւ ի գործադրութեան դրուին :

17. Ա. ՄՍՅՐԵՆԻ ԼՆՋՈՒ ԳՍԻԹՆԱՆ, որ այս շարքին երկրորդ հատորն է, զուարճալի նիւթերով ու օգտաշատ հրահանգներով, որոնց նպատակն է՝ մանուկին միտքը զարգացնել գիտական ծանօթութիւններով, մտամարզութեան, իրազիտութեան, լեզուի եւ մտածութեան վարժութիւններով կը պարունակէ նաեւ մանկական նամակներ, առածներ, հանելուկներ, արձակ թէ ոտանաւոր մանրավէպեր ու բանաստեղծութիւններ՝ սահուն և զուարթ ոճով եւ մաքուր աշխարհարարով : Տպ. 1904, էջ 160 : **5. Դտհ.**

18. ՃՍՇԱԿ ԴՈՐ ԳՐԱՆԱՆՈՒԹԵԱՆ, որ կը պարունակէ գեղեցկոգոյն հատուածները ժամանակակից Գրիւնբուրն Գրասէր անյ ութեան հասցիի եւ շահեկան հաւարայն մ'է այս ձեռնարկը, որ ընթերցանութեան արժանի այնքան ընտիր պարունակութիւն մը ունի Ազգագրական, բաւաստեղծական, բարոյական, գեղարուեստական, ընկերական, իմաստասիրական, կենսադրական, կրօնական, բեմաստակուն, նամակագրական, նկարագրական, պատմական եւ վիպական ճիւղերու վրայ հրահանգիլ տեսութիւններու յաջորդող հատուածները մասնաւոր հրապոյր մը կ'ընծայեն իրենց ընտիր նիւթերով եւ հետաքրքրական պէսպիսութեամբ :

Թէ՛ իբրեւ ընթերցանութեան գիրք ժողովուրդին համար եւ թէ՛ իբր դասագիրք՝ իր մեծամեծ առաւելութիւններովը ժամանակակից հրատարակութեանց լուսազոյնն է ճաշակու Տպ. 1905, էջ 430 : **7 Դտհ.**

19. ԴՈՐ ԸՆԹԱՑԻ ԿՐԱՆՍԵՐԷՆ. գործ Կարապետ Քէհեաեանի, մասնաւոր եւ ինքնագիրտ մէթո-

տով կ'ուսանդէ Պրանսերէն լեզուին ընթերցանութիւնը ,
բառագիտութիւնը , գրուցատրութիւնը , քերականութիւնը
եւ զրաւարժութիւնը , Տպ. 1905 , էջ 40 : **2 Դտհ.**

50. ԱՐՈՒՆԵՍ ԼՈՒՍՍՆԿՍՐՉՈՒԹԵԱՆ.
Ամաբէտըքներու յատուկ.-Դեղագործ Յակոբ էֆ. Թէրզեան
այս պրակով կ'ուսուցանէ լուսանկարչութիւնը՝ մեկ ժամ-
ուան մէջ : Կը խօսի լուսանկարչութեան գործիքներու
եւ պիտոյքներու վրայ ինչպէս եւ անոնց գործածման եղա-
նակը կը բացատրէ : Տպ. 1905 , էջ 16 : **3 Դտհ.**

51. ԲՆՕԱԿԱՆ ՍՍՆԴՈՒՆ. Զ. Յովն վար-
դապետ Նալպանտեանի : Հայերէն այբուբենը եւ ընթերցա-
նութիւնը , գրուցատրութիւնը եւ ուղղագրութիւնը՝ արագ
ու հիմնապէս եւ գործնականապէս ուսուցանելու յատկաց-
ուած է : Տպ. 1905 , էջ 48 : **3 Դտհ.**

52. ՆՈՐ ՈՒՆՏԻ ԿՏՕԱՍՐԱՆԸ , Միջին
Ընթացք կրօնի ուսման . վաղ դան Բահ. Ասլանեանի :

Հեղինակը օտար լեզուներու եւ կրօնական ոչ հայացի
ըմբռնումներու ազդեցութիւնը կրած չլլալով՝ Հայ քահա-
նայի մը պարզ ոգիով ու ռժով շարադրած է իր այս երկ-
րորդ աշխատութիւնն այլ զոր հեղինակած է Սուրբ Գիրքի
եւ անոր յարակից քննական գործերու հետեւողութեամբ :
Ունի զեղեցիկ իրատական մը՝ ուսուցչներուն ուղղելով :
Տպ. 1905 , էջ 128 : **3 Դտհ.**

53. —

54. —

55. —

56. —

57. —

58. —

59. —

60. —

**Դարեանց հրատարակութիւնները ցարուհա-
կելի են :**

Ս. ԴԱԻԹԵԱՆԻ աշխատութիւնները ո՛չ միայն վաւե-
րացուած են Ուսուցմ. Խորհուրդէն , այլ եւ Կեդր. վար-
չութեան կողմէ յանձնարարեալ դասագիրքերու ցանկին եւ
Մէարիֆի պաշտօնական Գրացուցակին մէջ նշանակուած
են :

Նաեւ Ազգ. պաշտօնական մարմիններ , Կրթական վար-
չութիւններ եւ առ հասարակ ամէն ձեռնհաս Ուսուցիչներ
Պոլսէն թէ Գաւառներէն զրկած են՝ իրենց փորձառութեան
վրայ յենլով՝ զնահատական նամակներ , վերոյիշեալ դասա-
գիրքերու օգտակարութեան և արդիւնատրութեան մասին :

Լրագիրներ եւ պարբերական Հանդէսներ այլ ժամանակ
ժամանակ նուիրեցին իրենց էջերը՝ քննելու , դատելու եւ
զնահատելու այս աշխատութիւնները :

Բ.

ՀԱՅՅԱՅՅՈՒՄ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ

Դաւթեան Գործակալութիւնը կը կատարէ յանձնարա-
րութիւններ ամէն ձեւակ եւ ամէն շեղումով գիրքերու ,
ինչպէս եւ դպրոցական ու զասական պիտոյքներու : Կը
հայթայթէ Մանկագրութեան նիւթեր , աշխարհացոյց քար-
տէսներ , բնագիտական՝ բնապատմական գործիքներ , ձե-
ռագործի նիւթեր , ձեւագիրտութեան եւ ասեղնագործի ա-
ռարկաներ , եւայլն , կը յանձնածէ՝ իր հրատարակած գիր-
քերէն զատ՝ բոլոր հեղինակներու գործերը՝ Պոլիս , Տփղիս ,
Երուսաղէմ , Վիէննա , Վիենտիկ , Իզմիր , Բարիզ եւ ուրիշ
տեղեր տպուած ամէն տեսակ Գիրքեր , Լրագիրներ , Հան-
դէսներ եւ որ ի կարգին : Դիւրութիւններ կ'ընծայէ վար-
ժարաններու Մատենադարաններ կազմելու , որպէս զի ու-
սանող մանուկներն իրենց առօրեայ դասերէն դուրս գիրքեր

ալ գտնեն կարգաւու , իբրեւ ամբողջացուցիչ մաս կրթութեան (Տես Բիւրակն 1900 , Հոկտ. 31 , Թիւ 40) :

Յանձնարարութեանց առթիւ ուշ դնել սա կէտերու .

1. Յանձնարարութեանց փոխարժէքը կանխիկ զըրկուելու է գէժ մօտաւոր հաշուով :

2. Յանձնարարութեան գիրքերուն քանակութիւնը , տեսակը , հեղինակին եւ ի հարկին տպարանին անունները՝ ինչպէս եւ քանիբորոր տպագրութիւն ըլլալը որոշ գրուելու է :

Ծան. — Կարելի է , սակայն , այս ծանօթութիւնները չտալ եւ ընտրութիւնը մեր կամքին թողուլ՝ միայն նշանակելով թէ ո՞ր դատարանի համար եւ ինչ ծիւղի գիրք է պէտք եղածը :

3. Որոշակի գրել թէ որո՞ւ հասցէին զրկուելու են , եւ ի՞նչ միջոցով (փոսթո՞ւղ թէ սնտուկով) եւ ո՞ր ճամբով :

4. Երբորդ անձի մը միջոցաւ գիրք ապաւրելէ աւելի լաւ է ուղղակի մեզի գրել , որով սխալ գիրք չի զրկուիք եւ աւելի զեղչ կը տրուի Վարժարանին :

5- Օսմ- ոսկին 108 , մէծիտը 20 , ֆրանքը 4 , 30 ՂԵ-ի հաշուով կ'առնուին :

6. Մեզի դրամ զրկել կարելի է՝ կա՛մ մանտափօս . թով , կա՛մ մեր հրամանին վճարելի փոխանակագիրով եւ կա՛մ ապահովագրութեան նամակին ներփակելով փօսթի փուլ , փորբաքանակ յանձնարարութեանց համար :

(100 հատ փուլը՝ 100 զրուշի հաշուով կ'ընդունուի . այսինքն մէծիտիչէն 19էն՝ իսկ օտար (ու-Օսմանեան) փուլերը հարիւրին 15 զեզով կ'ընդունուին) :

7. Եթէ փոխարժէքը կանխիկ զրկուած չէ , յանձնարարութիւնը չկատարուելուն համար պատասխանատու չենք : Բայց ամէն կերպով պատասխանատու ենք եւ ամէն

չանք ու խնամք կը պարտինք յանձնարարութիւնն անյապաղ եւ ճշիւ կատարելու , ետք փոխարժէքը կանխիկ է :

8. Մեր գիրքերուն զեղչի սակն է միօրինակ $\frac{1}{10}$ 15. — փոսթի , փոխադրութեան եւ մաքսի ծախքերը յանձնարարողին պատկանելով :

9. Հատով գնուած գիրքերու վրայ զեղչ չի տրուիր :

10. Վաճառուած գիրքերը ետ չեն առնուիր :

11. Հաշիւներու մասին դիտողութիւններ լսելի են առաքման թուականէն մինչեւ երկու ամիս :

12. Կրթական Ծրագրի եւ դասագիրքերու ընտրութեան մասին խորհրդակցութեան համար կրնայ մեզի զըրուիլ :

Յանձնարարութիւնները կը կատարուին ճշդիւ . խնամով , առաջ :



9.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ուսուցիչ դասին վիճակը օր ըստ օրէ բարեկաւուածեան հասցնելու պէտքը փաստարանել աւելորդ է : Յաճախ արժանաւորներ կը մնան մտքի մէջ , առանց բաշտելութեան , նոյն իսկ առանց պաշտօնի եւ ապրուստի միջոցներու . մինչդեռ ուրիշներ՝ գուցէ նուազ արժանաւորներ՝ շնորհուկով , կողմնակցութեամբ եւ այլ միջոցներով աւելի բաղդաւոր կը գտնուին՝ ապահովուած տեսնելու իրենց նիւթականը : Մայրաքաղաքը եւ իր արուարձանները զիւրութիւն կրնան ունենալ իրենց ընտրութիւնն ընելու՝ ամէն անգամ որ դասատու գտնել ուզեն , բայց գաւառները . — կը յիշուի թէ , մինչեւ մօտ ատեններ , գաւառներու կըր-

Յական վարիչները ուսուցիչ գտնելու համար՝ կը դիմէին կամ Ուսումն. Խորհուրդին կամ որ եւ է լրագրի վարչութեան եւ կամ Պոլսոյ մէջ իրենց ծանօթ անձի մը : Ասոնցմէ առաջինը իր շատ աւելի կարեւոր գրադումներուն մէջ ինչպէս ժամանակ գտնէ այս տեսակ գործերով զբաղելու : Լրագրի վարչութիւններ ինչ պարտք ունին իրենց ժամանակն ու ուշը յատկացնելու այդ կարգի գործերու , որոնք լրագրական շրջանակէն դուրս են : Իսկ մասնաւորներ, թող թէ ձանձրոյթ ու բռն կը նկատեն , այլ եւ ընտրութեան մէջ շատ անգամ սխալելու եւ խաբուելու ընդունակ են :

Վերջապէս , մէկ կողմէ պաշտօնեանները եւ միւս կողմէ պաշտօնեայի պէտք ունեցողները բազմադիմի դժուարութիւններէ ազատելու համար , պէտք էր ԿԵՂԻՄԻ մը հաստատել , ուր խնդրանք ու մատուցում զիրար գտնէին եւ անպաշտօն ուսուցիչներ եւ վարժուհիներ վստահութեամբ ու արժանապատուութեամբ դիմէին՝ իրենց աստիճանին ու կարողութեան համապատասխան պաշտօն մը ձեռք բերելու համար :

Այս կեդրոնն է ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՂՈՒԹԻՒՆԸ՝ որ , առաջինն ու միակն ըլլալով իր տեսակին մէջ , 15 տարիէ ի վեր ամէն ջանք ի գործ կը զնէ՝՝ զիմագրուելու այն դժուարութեանց որ անբաժան են ամէն գեղեցիկ զտղապարի եւ ձեռնարկի առաջին քայլերէն :

Հոս քանի մը հարցում կը ներկայանայ մեզի .

1. Թէ մենք կարո՞ղ ենք այդպիսի գործ մը վարելու :
2. Թէ մեր ձեռնարկն օգտակար կրցա՞ծ է ըլլալ :
3. Թէ դեռ ի՞նչ միջոցներու պէտք կայ աւելի եւ՞

արդիւնաւորելու այս հանրօգուտ ձեռնարկը :

Ահա երեք հարցումներ որոնց պիտի ջանանք պատասխանել .

1. Իբրեւ նախկին աշակերտ բարձրագոյն վարժարանի մը . իբրեւ ուսուցիչ որ բաւական տարիներ Պոլիս

եւ Գաւառները ջանացած է օգտակար ըլլալ կրթական գործին . իբրեւ երկար տարիներ զպրոցական խնդիրներու , ինչպէս եւ գաւառական կեանքին հուսաարապէս հետամտած եւ փորձառութիւն ստացած մէկը , կը կարծենք թէ Գործակալութեան վարիչը կատարելապէս ձեռնհաս ու ատակ է այսպիսի գործի մը :

2. Գործակալութեան հիմնարկութենէն (1892 Մալիսէն) ի վեր պաշտօնի զրկուած բազմամիւ ուսուցիչներու մեծագոյն մասն՝ երեք եւ աւելի տարիներ շարունակած են վարել իրենց պաշտօնը : — Ինչ որ կ'ապացուցանէ թէ կատարուած ընտրութիւնները քաջայարմար եղած են՝ պաշտօնին , տեղին , բաղաբին եւ ուրիշ հանգամանքներուն :

Մեր փափաքն ու ջանքն եղած է խնդրանքին լիուրի համապատասխան հանգամանքներ ու արժանիք ունեցող ուսուցիչներ առաջարկել , — Ո՛ր միայն այսքան , այլ եւ մեր դիտումն եղած է ընտրել , հմտութեան հետ մէկտեղ , բարոյական նկարագիր կազմելու ընդունակութիւն ունեցող կրթական պաշտօնեաներ , որոնք զիտան թէ ո՛ւր կը ձգտի բուն կրթութիւնը :

3. Տասնըհինգ տարուան փորձով եւ մասնաւոր հոգածութեամբ , Գործակալութիւնը այսօր հասած է այնպիսի կազմակերպութեան մը որ՝ կրնանք ապահովապէս ըսել թէ՛ տեսականութիւնն ապահովուած է եւ հանրութեան կը մնայ անոր ընծայել հարկ եղած քաջալերը : Վասն զի , Գործակալութիւնը , թէեւ անհատական ձեռնարկ մը , սակայն նկատի առնելով անոր հանրօգուտ նպատակը , արժան է արդար է որ նկատուի հանրային հաստատութիւն մը որ կը ձգտի օրէ օր , — իրեն ընծայուած աշակցութեան չափով — եւս քան զեւ օգտակար ու արդիւնաւոր ըլլալու : Եւ որովհետեւ Ուսուցիչներուն առաւելապէս ձեռընտու եւ օգտակար ըլլալ կը նկրտի , ամէն ազգային Ուսուցիչ շահը կը պահանջէ որ Գործակալութիւնն հետզհետէ

աւելի բարգաւաճ ու զօրաւոր դիրք մ'ունենայ . եւ ինչ չափով որ իրենք ստատրեն առ այս, ու կատարեն իրենց պարտականութիւնը, նոյն չափով եւ աւելի ալ պիտի կըրնան՝ իրրեւ իրենց իրաւունքը՝ փոխադարձաբար վայելել ամէն զիւրութիւն, ձեռնտուութիւն եւ նպատակ իրենց նրծական եւ բարոյական զարգացման համար :

Հետեւաբար, Դաւթեան Գործակալութիւնը կը փութայ ծանուցանել Մայրաքաղաքիս ու Գաւառներու Թաղ. Խորհուրդներուն, Ուսումն. Խորհուրդներուն, Հոգաբարձականաց եւ ամէն Դպրոցական Վարչութեանց՝ Թէ պատրաստ է զրկել իրենց՝ դպրոցական պաշտօնեաներ — Տնօրէն, Մասնագէտ - դաստատ, Դաստիարակ - ուսուցիչ, Վարժակահի —, Կազմական Գանձազրի եւ առաջարկութեան վայմաններու համեմատ :

Պէտք է որոշակի իմացնել Թէ ուզուած պաշտօնեան ինչ աստիճանի վկայագիր, ինչ ճիւղերու հմտութիւն և ինչ մասնաւոր հանգամանք ունենալու է, ինչ պաշտօնի համար կ'ուզուի, ինչքան Թոշակ կրնայ վճարուիլ . եւ այլն, եւ այլն :

Պէտք է նաեւ զրկել ընտրելիին վճարելի առաջին աշականն ու ծամբու ծախքը, եւ ի հարկին պայմանագիր կնքելու արածնել Գործակալութիւնը :

Միւս կողմէ, Գործակալութիւնը Դասատուներուն կ'ընծայէ ամէն աշակցութիւն, կատարելով անոնց յանձնարարութիւնները : Անպաշտօն Ուսուցիչներուն եւ Վարժուհիներուն կը հայժայթէ պաշտօն՝ իրենց կարողութեան եւ արժանիքին համեմատ :

Փորձը ցոյց առած է Թէ Դաւթեան Գործակալութիւնը, իրրեւ կեղրոն դպրոցական պաշտօնեաներու, օգտակար եղած է Թէ՛ ուսուցիչ դասուն եւ Թէ՛ Պոլսոյ ու Գաւառի Ազգ. դպրոցներուն՝ միջնորդելով անոնց յարաբերութեանը եւ ընձեռնելով ամէն զիւրութիւն՝ մէկ կողմէ պաշտօն փըն :

տրուողներուն եւ միւս կողմէ պաշտօնեայի պէտք ունեցողներուն :

(Այս մասին կարդալ նաեւ Բիւրակն, 1900, Թիւ 41 էջ 653) :

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Յ Ի Ն

Պատշօն փնտոյ Ուսուցիչներ եւ Ուսուցչուհիներ պարտին ունենալ Ուսուցչութեան Վկայագիր. բս տաւաղութեան Պետական եւ Ազգ. Օրէններու : Նաեւ կանխաւ Գործակալութեան հաղորդելու են իրենց Կենսագրութիւնը՝ որոշելով իրենց մասնագիտական ճիւղերն ու պայմանները :

Պատ. Ուսուցիչներ կը հրաւիրուին արձանագրուիլ Գործակալութեան Տնօրէնին մէջ՝ հետեւեալ տեղեկութիւններ տալով . 1. Անուն եւ մականուն, 2. Տարիք, 3. Հայրենիք, 4. Ամուսնութեան անուսացած են, 5. Ո՞ր դպրոցէ ելած են եւ ո՞ր բուսականին, 6. Ի՞նչ ճիւղերու հմտոս են, 7. Ինչ պատշօններու մէջ զտնուած են ցարդ, 8. Ուսուցչական վկայագիր առած են, ի՞նչ ճիւղերու համար եւ ի՞նչ աստիճանի, 9. Հասցէ, 10 Թուական եւ Մտրագրութիւն :

Այս հարցումներ պարտնակող տպեալ բուրք մը, Կենսագրական Տեղեկագիր, կը զրկուի արձանագրուիլ փալիաբոյներուն, որոնք հարցումներուն պատասխանելով՝ կը վերադարձնեն Գործակալութեան :

Մասն. — Գաւառացի Ուսուցիչներ պարտին այս տեղեկութեանց հետ զրկել 20 դահեկանի փոսքայի փուլ՝ նամակի եւ ի հարկին հետագրի ծախներուն համար :

Իսկ տնձամբ ներկայացողներ կը վճարեն միայն 5 դահ. արձանագրութեան վարձք :

Քորձակալութիւնը ի դիւրութիւն հասարակութեան, պէտք ունեցողներուն կ'առաջարկէ եւ պատճառները կը դնէ նաեւ Գրագիրներ, Գործակատարներ, Հասարակականներ, Հաւաքիչներ եւ այլ այս կարգի պատճառներ՝ որոնցմէ կանխաւ երաշխաւորութիւն կ'առնուի, պատճառներն պահանջած կերպովը:

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր ()

Գործակալութիւնը իր աշխատութեանց փոխարէն պատճառները դրկուելիք անձերէն կանխիկ կ'ստանայ յանձնարարողէք, անոնց մէկ ամսականին հաւասար գումար մը:

Այս քանակէն կրնայ գեղջ ըլլալ՝ ընտրելիին նիւթաւ կան կարողութեան համեմատ:

Պատճառներն ուզող Թաղ. Խորհուրդներէ եւ Հոգաբարձութիւններէ ո'ր եւ է վարձք չի պահանջուիր:

Սակայն մասնաւոր անձերու առաջարկուած պատճառներէն համար որոշեալ ամսականին կէտը պատճառներէն կը վճարէ եւ կէսն ալ պատճառներն ուզող անձը:

Գ. Ե Ե.

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐ. ԳՈՐԾԵՐ

Գործակալութիւնը կ'ստանձնէ ուրիշ Հեղինակներու պատճառները գրէր, մանաւանդ դասագրքերը հրատարակել՝ Մէտրիքէն վաւերացման, սպագրութեան, փորձերու սրբագրութեան, կազմի եւ այլ աշխատութիւնները կատարելով:

Ի դիւրութիւն անոնց որ մտադիր են ո'ր եւ է գիրքի հրատարակութիւնը ընել, ստորեւ ցոյց կուտանք ինչ ինչ միջոցներ ու պայմաններ որոնց զորձագրութիւնը անհրաժեշտ է:

1. Տպուելիք գիրքին ձեռագիրը երեք ՕՐԻՆՍԱԿ զըրուելով մեզի դրկուելու է. (վաւերացման համար Մէտրիքէն ներկայացուած ձեռագիրներն ըստ օրինի *երեք օրինակ* ըլլալու են:)

2: Զեռագիրը *սեւնկոյկ վերջը* միայն կրնանք որոշել:

Թէ գիրքը ինչ դիրքով ու ծաւալով եւ քանի՞ ժողովուրդ կրնայ ըլլալ:

Թէ ո'րչափ գումարի կրնայ հասնիլ անոր սպագրութեան, թղթին, կազմին, սրբագրութեան եւ յարակից աշխատութեանց ծախքը:

Թէ ո'րքան օրինակ պէտք է եւ կրնայ սպուիլ:

Թէ Դատարան Գործակալութիւնը կ'ստանձնէ՞ հրատարակելու գիրքին ծախքը եւ իր հաշուին կատարել սպագրութիւնը:

Թէ այս պարագային ի՞նչ իրաւունք կը վերապահէ գիրքին տիրոջը կալ նեղինակին:

Այս ամէն կէտերը կարելի չէ որոշել մինչեւ որ աշխատանքը կ'աւարտուի չունենանք սպուելիք գիրքը:

(*) Տես Ռիւրակն, 1900, Թիւ 41, Վարչական խորհուրդի հատուածը:

Ճեռագիրը չորհած՝ այս պայմաններու մասին նա մակով մեզի հարցումներ ուղղել աւելորդ ժամակաւանաւորիսն ու յոգնուրիսն պիտի ըլլար, որոնց պէտք չընդելու համար է որ այս տեղեկութիւններ կը յանձնեն մեծարոյ հեղինակներուն ուժադուրեան, որպէս գլխակցաբար համակերպին վերոյիշեալ առաջին պայմանին. եւ երբ օրինակ ձեռագիրներ պատկոզագրուաղրկեն մեր հասցէին:

3. Իսկ անոնք որ կ'ուզեն իրենց հաշուին կիսաբել գիրքին հրատարակութիւնը, պէտք է հոգան ծախքեր հեղեն թէ ի՛նչ դիրով ու քրթով, ի՛նչ քանակութեամբ ու կազմով կ'ուզեն հրատարակել իրենց գիրքը: Այս պարագային ալ, ծախքին քանակութիւնը որոշելու համար դարձեալ անհրաժեշտ է որ տեսնենք ձեռագիրն եւ ցոյսանք մօտաւոր հաշիւը:

Նոյնպէս, կը կատարուին սպագրական ամէն գործեր՝ այցեսոմս, օրջաբերական, նամակագրութիւն, ազդեր, դպրոցական բարենիւթ, պատուանիւթ, վկայագիր, վիճակացոյց, եւ այլն:

ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեզի հետ գործի վերաբերեալ թղթակցութիւն ընող անձերէ կը խնդրենք խնայել մեր ժամանակին:

Ասոր համար կ'առաջարկենք.

1. Նամակները գրել ընթեռնելի գիրով, յստակ ոճով եւ կարճ՝ շատ կարճ՝ միայն կարեւոր կէտերը, տուայց աւելորդ. բանուծեան.
2. Նիւթերը զատել թիւերով.
3. Որոշ գրել իրենց տնունը, մակնունը եւ հասցէն,

Ասով կարելի է զերծ ըլլալ շփոթութիւններէ, յապաղումէ եւ ժամանակի կորուստէ:

Գործակալութեան վերաբերեալ նամակ, դրամ, էայլն. ղրկելու է առ Մմբատ Գաւթեան,

Խօրասանեան Խան, Սիրքէճի

استامبولده سرکه جیده خوراسانجیانی خاندده داودیان افندیه


SIMBAT DAVIDIAN

Korassandjian Han, Sirkédjy

STAMBOUL

ԱՅԼԵԻ ԱՅԼ ԳԻՐՔԵՐ

Աշխարհագրութիւն Գր. Մարգարեան .	
Տարական մաս	2 50
Միջին ,	4
Բարձրագոյն ,	6
Առաջնորդ Թարգմ. Գաղ. - Հայ. Խ. Սիմոնեան	4
Առաջնորդ Թարգմ. Գաղ. . Տանկ. ,	5
Ասորա (Քարմէն Սիլվա) Թ. Թէրզեան	10
Բաւարան Հայ. Գաղղ. Տէմիրճիպաշեան	20
Իրցաբանութիւն Բ. Բարսեղեան,	5
Նղերեգութիւններ Ա. Համբարձեան	3
Նրախայրիք Բանաստեղծական Գ. Մ. Էլովէզեան	7 20
Երգեր, Տաղեր. եւ այլն, Մ. Թուրեան	7
Ընթանեկարճ Թանգարան Ա. Գ. Մասեհեան	3
Թուաբանութիւն Տամկանեան,	5
Թուաբանութիւն Ա. - Զ. մասեր Ա. Պ յանեան	1
Թուաբանութիւն, Թ. Գ. Փալազաշեան	11



Ժամանց , 2. Փոփոզեան	5
Լիննարդ եւ Գերսուդ Խ. Եպ. Ստեփանէ	5
Մաղիկներ Անգղ. Գրականութ. Մ. Մինասեան	3
Կեանք առանց հաւաստի, Ներսէս Վ. Դանիէլեան	10
Կենսագր. Տօքթ. Արքիշէնի, Տօքթ. Թորգոմեան	8
Հանրահաշիւ Թագորեան	25
Միւլթրան իւլ ուլում Յ. Փաշեան,	6
Նոր Կտակարան	5
Ներեցնչունք Սէթեան	5
Նուագի եւ սերպեայ	5
Ուսուլի Մուսնէմէի հուզուզիլէ	8
Ուսումն Բրիտանեական Ա. Վարժապետեան	2 20
Չիմբիլիի (Տանկ.)	25
Պատմութիւն Ընդհանուր Դ. Խաչոնց Ա. տիպ	5
Պատմութիւն Օսմանեան, Համստոս, Աշճեան	3
(Նոյն), Գր. Մարգարեան,	3
Սաղմոս Գաւթի Խոշորագիր	6
Սուրբ Երկիր, Տրդատ Եպիսկ. Պաշեանի	10
Վերելք յԱրարտ Գ. Փոփոզեան	5
Տաղաչափութիւն Զօրսեան	5
Ռէսմի Տամղա Գանուննամէսի	2 20
Օնանու մեղիք, Եղ. Մուրատեան, Բ. տիպ	10
Ֆրանսերէն Լեզու Մ. Խորթունեան,	5
Algèbre Pichot	10
Gramm. du premier âge, Larousse	5
Orthographe	10
Style	8
Grammaire Guérard	8

Նախ Կարենան Գործակարգի
միակ կեդրոնացեցին է Առումն. Խ
հուրդի Կրթական Ծրագրին հասկեն
յօրինուած դասագիրքուն :



Այս Գրացուցակը կը ջնջէ
նախորդները :

مارف نظارت جلاله سنك في ٥ نيسان سنه ٣١٧ تاريخو
و ٣٩ شمردلى رخصتتا مسيله طمع او انشدر

« Ազգային գրադարան



NL0130657

8419